




## ՔԱՐՈԶ

ԳԵՂՐԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ

### ՍԻՐՈ ՊԱՏՎԻՐԱՆԸ ՀԻՍՈՒԽԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

«Եյս է պատուիր իմ, զի սիրեսչիք զմիմեանս, որպէս  
և ես սիրեցի զձեզ»:

ՀՈՎՀ., ԺԵ 12:

  
թիստոնեական կրոնի առաջին և  
մեծագույն պատվիրանը սերն է,  
սեր առ ընկերն, սեր առ մարդն  
և սեր առ Աստված: Քրիստո-  
նեական կրոնի ողջ բարոյականը հիմնվել է  
այդ սիրո վրա և հենց դրա համար էլ մեր  
Փրկիչը իր նոր կյանքի և նոր աշխարհի  
օրենք հոչակեց ու ավանդ թողեց իր աշա-  
կերտներին սիրո մեծ կտակը. «Եյս է պա-  
տուէր իմ, զի սիրեսչիք զմիմեանս, որպէս և  
ես սիրեցի զձեզ»: Սիրո այդ կտակը կամ  
քարոզը ցույց է տալիս քրիստոնեական կրո-  
նի գերազանցությունը: Քրիստոս ապրեց  
այդ սիրո կյանքով և այն ավանդ թողեց իր  
եկեղեցուն: Հիսուսի պատվիրած սերը քրիս-  
տոնյա հավատացյալի դրոշն է: Մարդկու-  
թյան Փրկիչը իր պայքարի և սիրո դրոշը  
բարձրացրեց աշխարհի անիրավությանց,  
շարիքի, տպիտության, մեղքի և մահվան դեմ:  
Եւ քրիստոնեությունը հաղթանակեց ու հաղ-  
թանակում է սիրո այդ մեծ ու հավիտենա-  
կան քարոզով, որովհետև Հիսուսի ավան-  
դած սերը, դրոշը մարդկային ձեռագործ էքը,  
այլ աստվածատուր մի պարգև երկնքից ա-  
ռաքված, և այդ մարմնացած սիրո դրոշը  
ինքը Փրկիչն էր, Մարդ-Աստվածը, համակ  
սերը, մարդկության մարմնացած ու խտա-  
ցած խիղճը, անարդարության դեմ՝ պայքա-

րի, արդարության ու ճշմարտության հաղ-  
թանակի դրոշը:

Աստված այնքան սիրեց աշխարհն ու  
մարդկությունը, որ նրանց փրկության հա-  
մար տվեց իր Միածնին:

Այդ աստվածառափ սերը փրկության, ա-  
զատության կոչ էր բերում ժամանակակից  
աշխարհին ու մարդկության. դա ազատու-  
թյան կոչ էր բոլոր ճնշվածների, հալածված-  
ների համար. ռեկայք առ իս ամենայն վաս-  
տակեալք և բեռնատրք և ես հանգուցից  
զձեզ»:

Քրիստոսի բերած սերը, նրա թողած սիրո  
մեծ կտակը կերպարանափոխեց աշխարհն  
ու մարդկային բոլոր հարաբերությունները:  
Մարդասիրության ու հայրենասիրության  
ծով սերը ալեկոծում էր Փրկիչ Հիսուսի սիր-  
ուր, նա իր աստվածային շրմների վրա սի-  
րո, քաջալերության, մխիթարության խոսք  
ուներ բոլորի համար: Նա սիրում ու տառա-  
պում էր մարդկանց հոգու համար, սիրում  
էր մարդկանց և այդ սիրով ուզում էր նրանց  
բարձրացնել դեպի ճշմարտության, արդա-  
րության, առաքինության բարձունքը, դեպի  
կատարելություն, դեպի Աստված: Եվ հենց  
դրա համար էլ նոր պատգամ էր տալիս իր  
աշակերտներին, որոնք իր Ավետարանի  
լուսն ու ճշմարտությունը պիտի հասցնեին

աշխարհի բոլոր կողմերը՝ սիրել իրար ու ժարդկանց այնպես, ինչպես ինքն էր սիրում:

«Մեծ բան գայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց», Եվ արդարէ, մեր սիրո Փրկիչը, ինչպես նրան կոչում է մեր մեծ Ծնորհալին («Մէր անուն Ֆիսուս»), զոհեց իր անձը, թափեց իր անդին արյունը հավատացյալների փրկության համար և նույնը պահանջեց անել իր աշակերտներից և հետևորդներից. «Միրեաչիք զմիմեանս...»: Միրել նշանակում է անձը սիրահոմար զոհողության ենթարկել, տալ անձը՝ ապրեցնելու համար ուրիշներին:

Ուր սեր կա, սիրելի եղբայրներ և քոյրեր, այնտեղ կտիրի խաղաղություն, արդարություն, ճշմարտություն: Մերը մարդկանց կարհի խաղաղության ու անդորրության մեջ, սիրով զանգված հոգին անպարտելի կլինի մարտերում և չի նահանջի դժվարությունների առաջ: Մերը մարդկանց կրարձրացնի, կաստվածացնի, որովհետև «Մէր... ոչ խորհի զշար. ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգությին» (Ա. Կորնթ., ԺԴ 6), «Մէր ո՛չ ամբարհասածէ, ո՛չ հպարտանայ, ո՛չ յանգնի, ո՛չ զրդու»: Պողոս առաքյալը Կորնթացվոց առաջին թղթի ԺԳ զիշում գերազանց գրչով ու մտքով վերլուծել է քրիստոնեական սիրո գերապանցությունը:

Իր սրտի մեծ սիրով Քրիստոս սիրում էր մարդկանց և իր աշակերտներին, բայց և սրտի խորունկ ցալով, ալեկոծ հոգու վըշտով ցալում էր մարդկային անարդարության, կեղծիքի վրա: Նրա սիրո քարոզը խորթ էր հնչում ոմանց ականջներին, նրանք Փրկիչ սիրո քարոզին պատասխանում էին ատելության խոսքերով: Աստվածորդին ինքն էլ դարձավ հալածական ու աստանդական և սրտի ցալով արտահայտեց սա խոսքերը. Մեղուսուց որքք գոն, և թռչնոց երկնից բոյնք, այլ Ռոբուց մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ իւր» (Մատթ., Ղ 20): Եվ ահա դարերի խորքից հնչում է Քրիստոսի քաջալերական խոսքը բոլոր նրանց համար, ովքեր սեր քարոզեցին, բայց ատելություն գոտան. «Եկայք առ իս, ամենայն վաստակեալը և բնոնաւորք, և ևս հանգուցից զձեզ» (Մատթ., ԺԱ 28): Ան-

սահման սեր ավանդող Հիսուսի բուռն ցասումով էր լցվում հաճախ դեպի սիրո, խաղաղության թշնամիները, երբ նրանք, մանավանդ երուաղեմում, չուզեցին լսել նրա սիրո մեծ քարոզը, ու վերջին անգամ վրդովկեցնակ նրա հայրենասիրի մեծ սիրութը և արտասվաշաղախի խոսքերն արտասանեց. «Երուաղեմ՝ մերուաղեմ՝, որ կոտորէիր զմարդարէս և քարկոծ առնէիր զառաքալան առքեզ, քանից անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս ընդ թևովք, և ոչ կամեցարութը:

Այդ խոսքերի մեջ Փրկիչը իր մեծ սրտի անկեղծ ձայնն էր զրել իր կյանքի ամենափորձակալի ու հալածանքի մոտեցող օրերին, նա խարազանել է անարդարության ու անիրավության, բռնության ու չարիքի տխուր ասպետներին, որոնք, կուրացած իրենց նեղ կրքերից, չէին ցանկանում լսել նրա փրկարար ձայնը, և սիրո քարոզչին լուցնելու համար Գողգոթա քարձրացնելու զազիր դավադրությունն էին որոնում:

Փրկիչ Հիսուսի արտասանած վայերն ու երուաղեմին ուղղած խոսքերը՝ հայրենասիրական ու մարդասիրական չերմ սիրով էին շաղախված դեպի մարդկությունն ու աշխարհը: Նա ցանկանում էր, որ մարդիկ, աշխարհի բոլոր ժողովուրդներն իրար սիրեն այնպես, ինչպես ինքն էր ցանկանում:

Մարդկային հոգու ապերախտության դիմաց ծով վիշտն էր համակել Աստծու Որդուն և ժողովրդի փրկության համար զոհվելու պարտքի վեհ գիտակցությունն էր այրում նրա ծով սիրով հեղեղված սիրութը Բայց մարդկության ու աշխարհի փրկության զործը պիտի զլուխ բերվեր հետեղական սիրո, եղբայրության քարոզով: Ի՞նչ հրաշալի է երդում Ծնորհալին. «Մէր անուն Ֆիսուս, սիրով քով ձմբան՝ սիրու իմ քարեղէն»:

Քրիստոնեական մարդասիրական սիրը դարերի քարեղեն ձանապարհները ծաղկեցրեց Քրիստոսի սիրով, հազվեց ու խորտակվեց գերերի ատելության սառույցը Քրիստոսի սիրո կրակի առաջ: Փրկիչը իր այդ սիրո կտակով հզորների դեմ հաղթանակով ելավ և աշխարհ եղավ Քրիստոսի հետ:

«Միրեցէք զմիմեանսուս:— Այսօր էլ աշխարհ կարիքն ունի սիրո այդ քարոզին՝ իմա-

Դաղության ու անդրբության մեջ ապրելու համար: «Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահսցէ» (Հովհ., ԺԴ 22):

Մարդկությունը, հատկապես քրիստոնեական աշխարհը հացի, զրի, օդի շափ այսօր կարիքն ունի Քրիստոսի աստվածային սիրո և խոսքերին: Սերը հրաշքներ է գործել Եկեղեցու անցյալ կյանքում և կգործի այսօր: Ամեն մի գործ, լինի այն պայքար, թե խաղաղ աշխատանք, եթե սերը բացակայում է, ապա պայքարը կպարտվի, աշխատանքը կմնա՝ անկատար:

Սեր մեծ Վարդապետի սերը, սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, աշխատեցե՛ք դուք էլ զգալ և ապրել, և այդ սիրով առաջնորդվեցե՛ք ձեր ամեն մի քայլում: Սիրով աշխատեցե՛ք և սիրով կատարեցե՛ք ձեր վրա դըրված բոլոր պարտականությունները ձեր Մայր Եկեղեցու, ձեր ժողովրդի, ձեր Հայրենիքի հանդեպ: Սիրեցե՛ք ձեր ժողովրդին, Հայրենիքին, մարդկության այնպես, ինչպես Քրիս-

տոս սիրեց. «Սէր ոչ խնդրէ զիւրնա: Մանավանդ ձեր զավակներին դաստիարակեցե՛ք Եկեղեցու և Հայրենիքի սիրով:

Եթե յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ, ընտանիք Հիսուսի պատվիրած սիրո վրա հիմնըվի, Ճիսուսի սիրով կապվի, ապա խաղաղությունն ու երջանկությունը հաջողության հետ անպակաս կլինեն մարդկանց կյանքում:

Եթե ամբողջ աշխարհը Հիսուսի սերը իր ուղեցուց դարձնի, այլևս չեն լինի մարդաշինջ ու աշխարհավեր պատերազմները և խաղաղությունը կտիրի ամենուր:

Այդ սիրով առաջնորդվենք, սիրելի հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, որովհետև այդ սիրով ապրել է անցյալից մինչև այսօր մեր ժողովուրդը:

Հիսուս Քրիստոսի աստվածավանդ սերը լինի ձեր կյանքի առաջնորդ, և «Սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ, ամէն»:

